

ԻՆՏԵՐՆԵՏ ԽԱՆՈՒԹԻՑ ԳՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՏՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ և ՊԱՅՄԱՆՆԵՐ

Մենք ուրախ ենք ողջունել Ձեզ «ՕՐԱՆՇ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ի (**Օրանժ**) Ինտերնետ Խանութում eshop.orangearmenia.am: Սույն հատուկ դրույթները և պայմանները (**Հատուկ Պայմաններ**) հանդիսանում են հրապարակային օֆերտա ուղղված ֆիզիկական անձանց և սահմանում են պոտենցիալ կամ անկա բաժանորդի կամ գևորդի (**Հաճախորդ կամ Դուք կամ Ձեր/ Ձեզ**) կողմից հեռակա կարգով Ինտերնետ Խանութի միջոցով Ապրանքներ և/կամ Ծառայություններ ձեռքբերելու կարգը և պայմանները:

Սույն Հատուկ Պայմանները հանդիսանում են Բաժանորդային Պայմանագրի անբաժանելի մասը: Բաժանորդային Պայմանագրի գործողությունը տարածվում է Ինտերնետ Խանութի միջոցով առաջարկվող Ապրանքների և/կամ Ծառայությունների ձեռքբերման վրա և սույն Հատուկ Պայմանների հետ կարգավորում է Օրանժի և Հաճախորդի հարաբերությունները Ինտերնետ Խանութից գնումներ կատարելու հետ կապված: Ինտերնետ Խանութ մուտք գործելով, այն ուսումնասիրելով և/կամ օգտագործելով և/կամ Ինտերնետ Խանութից Ապրանք և/կամ Ծառայություն պատվիրելուց և/կամ գնելուց, Դուք ընդունում եք, որ ծանոթացել եք սույն Հատուկ Պայմաններին, Բաժանորդային Պայմանագրին և դրա մասը կազմող փաստաթղթերին, այդ թվում՝ ընդհանուր դրույթներ և պայմաններին և համաձայնում եք դրանց հետ:

Կողմերից յուրաքանչյուրը մյուսին երաշխավորում է, որ ունի բոլոր իրավունքները, իրավունակությունը և իրավասությունները, որոնք անհրաժեշտ և բավարար են Ինտերնետ Խանութի միջոցով Ապրանքներ և/կամ Ծառայություններ ձեռք բերելու համար:

Խնդրում ենք ուշադիր կարդալ և ծանոթանալ սույն Հատուկ Պայմաններին և որևէ պայմանի հետ համաձայն չլինելու դեպքում հրաժարվել Ինտերնետ Խանութից Ապրանք և/կամ Ծառայություն գնելուց և այցելել Օրանժի ցանկացած սպասարկման սրահ:

Սույն Հատուկ Պայմանների շրջանակում ներքոհիշյալ բառերը ունեն հետևյալ իմաստը, եթե այլ բան չի բխում ենթատեքստից`

Հաճախորդ` բացառապես անձնական, ընտանեկան, տնային կամ այլ օգտագործման համար նախատեսված և ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված նպատակներով Ապրանքների և/կամ Ծառայությունների պատվիրման կամ ձեռքբերման մտադրություն ունեցող կամ Ապրանքներ և/կամ Ծառայություններ պատվիրած կամ ձեռքբերած կամ Ինտերնետ Խանութում Պատվեր ներկայացրած/տեղադրած քաղաքացի կամ քաղաքացի, ով նշված է Պատվերում որպես Ապրանք և/կամ Ծառայություն ստացող:

Ապրանք(ներ)` Ինտերնետ Խանութում առաջարկվող բջջային հեռախոսներ, Վերալիցքավորման Քարտեր, Լոուրթուքեր, Նեթբուքեր, համակարգիչներ, Մոդեմներ,

օժանդակ պարագաներ, պահեստային մասեր և այլ GMS կամ այլ սարքավորումներ, որոնք նշված են Ինտերնետ Խանութի ընտրացանկում որպես «առկա».

Ծառայություն(ներ)` Օրանժի կողմից մատուցվող հանրային շարժական կապի ծառայություններ, որոնք ներառում, բայց չեն սահմանափակվում շարժական կապի ծառայություններով և լայնաշերտ ծառայություններով և որոնք նշված են Ինտերնետ Խանութի ընտրացանկում որպես «առկա».

Մոդեմ Օրանժի կողմից մատուցվող լայնաշերտ ծառայություններից օգտվելու համար Ձեզ տրամադրվող HSUPA USB կամ HSUPA բազմաֆունկցիոնալ սարք.

Բաժանորդագրման Փաթեթ` փաթեթ, որը տրամադրվում է Ձեզ Ծառայություններից օգտվելու համար և ներառում է համապատասխան Ծառայության մատուցման համար անհրաժեշտ ՍԻՄ Քարտը և/կամ ուղեցույցը և/կամ այլ անհրաժեշտ նյութեր և տեղեկություններ.

Վերալիցքավորման Քարտ` պաշտպանիչ շերտով ծածկված որոշակի գումարի կանխավճար պարունակող ծածկագիր կրող քարտ, որը օգտագործվում է Ձեր հաշիվը վերալիցքավորելու համար.

Հատուկ Առաջարկ` Օրանժի խթանիչ բնույթ ունեցող առաջարկ վաճառվող Ապրանքների և/կամ Ծառայությունների վերաբերյալ տրամադրվող գեղչերի, նվերների կամ վաճառքի այլ հատուկ պայմանների մասին, որոնք որոշվում են Օրանժի կողմից իր բացառիկ հայեցողությամբ: Օրանժն իրավունք ունի միակողմանի երկարացնել Հատուկ Առաջարկի գործողության ժամկետը առանց այդ մասին Հաճախորդին նախօրոք տեղյակ պահելու.

Ինտերնետ Խանութ` eshop.orangearmenia.am կայքում տեղադրված վիրտուալ խանութ, որտեղ ցանկացած Հաճախորդ կարող է ծանոթանալ Ինտերնետ Խանութում ներկայացված Ապրանքներին և/կամ Ծառայություններին, դրանց նկարագրությանը և գներին, ընտրել կոնկրետ Ապրանք և/կամ Ծառայություն և Պատվեր ձևակերպել` սույն Հատուկ Պայմաններով սահմանված կարգով: Ինտերնետ Խանութի ադմինիստրատոր և սեփականատեր է հանդիսանում Օրանժը.

Պատվեր` հայտ, Ինտերնետ Խանութում տեղակայված Ապրանքների և/կամ Ծառայությունների ցանկից Հաճախորդի կողմից գնման նպատակով առանձնացված Ապրանքների և/կամ Ծառայությունների ձեռքբերման վերաբերյալ, որը ներկայացվում է Օրանժին Ինտերնետի միջոցով Օրանժի կողմից սահմանված կարգով:

1. Ընդհանուր դրույթներ

■ Սույն Հատուկ Պայմաններում սահմանված կարգով Ապրանքների ու Ծառայությունների առուվաճառքն իրականացվում է և Ինտերնետ Խանութում Ապրանքների ու Ծառայությունների վերաբերյալ սահմանված առաջարկները գործում են բացառապես ՀՀ տարածքում:

- Օրանժի Հատուկ Առաջարկները գործում են Օրանժի կողմից դրանց համար հայտարարված ժամկետում, կարգով և պայմաններով:

2. Ապրանքներ և Ծառայություններ

- Ապրանքները և Ծառայությունները, որոնք առաջարկվում են Ինտերնետ Խանութում որոշվում են Օրանժի կողմից իր բացառիկ հայեցողությամբ: Օրանժն իրավունք ունի միակողմանի փոփոխել Ինտերնետ Խանութում առաջարկվող Ապրանքների և Ծառայությունների ցանկը առանց նախապես այդ մասին տեղեկացնելու:
 - Օրանժի չի երաշխավորում ցանկում ընդգրկված Ապրանքների և/կամ Ծառայությունների ցանկացած ժամանակ անկայությունը պահեստում: Օրանժը տեղյակ է պահում Հաճախորդին տվյալ տեսակի Ապրանքի և/կամ Ծառայության բացակայության մասին: Նման դեպքերում Հաճախորդի Պատվերը համապատասխանաբար կարող է փոփոխվել կամ Հաճախորդը կարող է հրաժարվել Պատվերից իր բացառիկ հայեցողությամբ:
 - Օրանժն իրավասու է սահմանափակել Ձեր կողմից պատվիրվող Ապրանքների և/կամ Ծառայություններին քանակը իր բացառիկ հայեցողությամբ:

3. Տեղեկատվություն

- Ապրանքները կարող են վիզուալ տարբերվել Ինտերնետ Խանութում և/կամ այլ խթանիչ և գովազդային նյութերում իրենց պատկերից/նկարից: Խնդրում ենք նկատի ունենալ, որ Ինտերնետ Խանութում տեղակայված բովանդակությունը և տեղեկատվությունը հիմնված է Ապրանքների արտադրողների կողմից տրված նկարագրերի վրա, իսկ Ապրանքների նկարները/պատկերները տեղակայված են որպես օրինակ: Օրանժը և/կամ Ապրանքներն արտադրողները և/կամ մատակարարները իրենց իրավունք են վերապահում փոփոխություններ կատարել Ապրանքների սպեցիֆիկացիաներում և/կամ նկարագրերում և/կամ վիզուալ նկարներում/պատկերներում առանց դրա մասին նախապես տեղեկացնելու: Օրանժը պատասխանատվություն չի կրում Ինտերնետ Խանութում տեղադրված Ապրանքների վերաբերյալ տեղեկատվության համար, եթե այն հիմնված է արտադրողի կամ մատակարարի կողմից տրամադրված տեղեկատվության վրա:
 - Ապրանքների և Ծառայությունների մասին տեղեկատվությունը, որը ներառում է առանց սահմանափակման տեղեկատվություն Ապրանքների և/կամ Ծառայության գնի, նկարագրի, մատուցման պայմանների, առաքման պայմանների, ժամկետների և այլնի մասին պարունակվում է Ինտերնետ Խանութում, իսկ Ինտերնետ Խանութում դրա բացակայության դեպքում գնացուցակում, սակագնային պլաններում, առաջարկների նկարագրում, օգտագործողի ուղեցույցներում, Հաճախորդին տրամադրվող երաշխիքային կտրոնում և այլ փաստաթղթերում, ինչպես սահմանված է Բաժանորդային

Պայմանագրում: Նշված տեղեկությունները և փաստաթղթերը հասանելի են Օրանժի պաշտոնական կայքից և/կամ Հաճախորդների սպասարկման կենտրոնից և/կամ Օրանժի վաճառակետերից և/կամ ԶԼՄ-ներից և/կամ այլ եղանակներով, ինչպես սահմանված է Բաժանորդային Պայմանագրով:

4. Գներ

- Ինտերնետ Խանութում սահմանված գները նշված են ՀՀ դրամով, ներառյալ ԱԱՀ-ն, առանց առաքման արժեքի: Առաքման արժեքը վճարվում է Ձեր կողմից: Առաքման արժեքին կարող եք ծանոթանալ Ձեր կողմից Պատվերը ձևակերպելու ժամանակ: Առաքման արժեքը կընդգրկվի Ձեր կողմից վճարման ենթակա հաշվի մեջ: Խնդրում ենք նկատի ունենալ, որ կախված Ապրանքները և/կամ Ծառայությունները պատվիրելու վայրից առաքման արժեքը կարող է տարբերվել: Օրանժն իրավունք ունի միակողմանի փոփոխել Ինտերնետ Խանութում սահմանված գները, այդ թվում՝ առաքման արժեքը, առանց դրա մասին Հաճախորդին նախապես տեղեկացնելու: Ապրանքների և/կամ Ծառայությունների համար Ձեր կողմից վճարումները կատարվում են դրանց վերաբերյալ Պատվերը ներկայացնելու պահին գործող գներով և սակագներով: Պատվերը ներկայացնելու պահ է համարվում Ձեր կողմից «գնել» կոճակը սեղմելու պահը:

5. Պատվիրման կարգ

- Պատվերի ձևակերպումն իրականացվում է Ձեր կողմից անձամբ՝ Պատվերը ձևակերպելու ժամանակ Ինտերնետ Խանութում սահմանված ցուցումներին համապատասխան:

- Պատվերը ձևակերպելու համար Հաճախորդն ընտրում է իրեն հետաքրքրող Ապրանքները և/կամ Ծառայությունները Ինտերնետ Խանութում ներկայացված ընտրացանկից սեղմելով կոնկրետ Ապրանքի կամ Ծառայության դիմաց գտնվող «գնել» կոճակը:

- Նույնիսկ եթե առաջին անգամ չեք օգտվում Ինտերնետ Խանութից և ծանոթ եք Ապրանքներին ու Ծառայություններին, խորհուրդ ենք տալիս մինչև գնումը ծանոթանալ պայմաններին, քանի որ Օրանժն իրավունք ունի փոփոխություններ կատարել առաջարկներում և պայմաններում, առանց դրա մասին նախապես տեղեկացնելու և Ձեր իմացած պայմանները կարող են փոփոխված լինեն: Դուք համաձայն եք ինքնուրույն հետևել սույն Հատուկ Պայմանների փոփոխություններին և Օրանժը պատասխանատվություն չի կրում Ձեզ հայտնի Ապրանքի և/կամ Ծառայության պայմանների՝ գին, առաքման պայմաններ և այլն փոփոխման դեպքում:

- Պատվերը ձևակերպելու ժամանակ Դուք՝ կախված Պատվերի տեսակից, պարտավոր եք Օրանժին տրամադրել հետևյալ անձնական տեղեկությունները՝ սեռ, անուն, ազգանուն, գրանցման հասցե, առաքման հասցե, հեռախոս, էլ. փոստ, անձնագրի

տվյալներ, ինչպես նաև Պատվերի հետ կապված Ինտերնետ Խանութում պահանջվող այլ տեղեկություններ:

- Մինչև Պատվերի հաստատումը Ձեզ ևս մեկ անգամ կխնդրենք հաստատել Բաժանորդային Պայմանագրին, այդ թվում սույն Հատուկ Պայմաններին Ձեր կողմից ծանոթ լինելը և դրանց դրույթները ընդունելը՝ համապատասխան նշում կատարելով պահանջվող պատուհանում:

- Պատվերի ձևակերպումը ավարտվում է «հաստատել պատվերը» կոճակը սեղմելով, որից հետո Հաճախորդին ուղարկվում է Պատվերը հաստատող նամակ: Պատվերի ձևակերպումն ավարտելուց հետո Օրանժը հաստատում է Ձեր կողմից ներկայացված Պատվերի գրանցումը՝ համապատասխան նամակ ուղարկելով Ձեր կողմից նշված էլեկտրոնային փոստի հասցեին մեկ ժամվա ընթացքում, որտեղ նշվում է Ձեր կողմից պատվիրված Ապրանքների և/կամ Ծառայությունների անվանումը, դրանց գինը, առաքման արժեքը, վճարման ենթակա ընդհանուր գումարը և Պատվերին կամ առաքմանը վերաբերող այլ տեղեկություններ: Այս պահից Օրանժի հետ Ապրանքների առուվաճառքի կամ Ծառայությունների մատուցման պայմանագիրը համարվում է հեռակա կարգով կնքված՝ սույն Հատուկ Պայմաններով և Բաժանորդային Պայմանագրով սահմանված կարգով և պայմաններով: Խնդրում ենք չպատասխանել այդ նամակին, եթե դրանում պարունակվող տեղեկությունները ճիշտ են: Ամեն դեպքում, Դուք իրավունք ունեք փոփոխություններ կատարելու Ձեր կողմից կատարված Պատվերում այն հաստատող նամակը ստանալուց հետո մեկ ժամվա ընթացքում, բայց ոչ ուշ քան մինչև առաքման վերաբերյալ Օրանժի կողմից Հաճախորդին զանգի միջոցով կամ այլ կերպ տեղեկացնելու պահը՝ համապատասխանաբար պատասխանելով Պատվերի հաստատման վերաբերյալ ստացված նամակին և/կամ հաստատելով այդ մասին Օրանժի կողմից ուղարկված հաղորդագրությունը: Խնդրում ենք նկատի ունենալ, որ վերոնշյալ ժամկետում Դուք կարող եք փոփոխել Ձեր կողմից կատարված Պատվերը միայն պակասեցնելով պատվիրված Ապրանքների և/կամ Ծառայությունների քանակը կամ հրաժարվելով պատվիրված Ապրանքից և/կամ Ծառայությունից կամ փոփոխություններ կատարել Ձեր կողմից սխալ մուտքագրված անձնական տեղեկությունների մեջ: Պատվերի քանակը ավելացնելու համար Դուք պետք է նոր Պատվեր ձևակերպեք Ինտերնետ Խանութում:

- Եթե Դուք հրաժարվում եք առաքված Ապրանքը և/կամ Ծառայությունը ընդունելուց և/կամ դրա համար վճարելուց, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է առաքման անհամապատասխանություն Ձեր կողմից ներկայացված Պատվերին, ապա Դուք պարտավոր եք Օրանժին վճարել առաքման գումարը ամբողջությամբ: Առաքման գումարը ենթակա է վճարման առաքողին՝ առաքումից հրաժարման վերաբերյալ համապատասխան փաստաթղթերը լրացնելու պահին: Սույն կետում սահմանված դեպքերի չարաշահման պարագայում (2 և ավելի անգամ) Օրանժն իրավասու է իր բացառիկ հայեցողությամբ չընդունել Ձեր կողմից հետագայում ներկայացվող

Պատվեր(ներ)ը և/կամ հրաժարվել արդեն ներկայացված Պատվերների իրականացումից և/կամ Ձեզ հետ կնքված Բաժանորդային Պայմանագրից:

- Եթե Դուք ունեք որևէ հարց կապված Ապրանքների և/կամ Ծառայությունների բնութագրի կամ որակական հատկությունների վերաբերյալ, նախքան Պատվերը լրացնելը կարող եք դիմել Օրանժին 555 կամ 055 000555 հեռախոսահամարով, պարզելու համար Ձեզ հետաքրքրող հարցերը:

- Ձեր կողմից պատվիրված Ապրանքների և/կամ Ծառայությունների մասով չմարված պարտքեր ունենալու դեպքում, Օրանժն իրավասու է հետաձգել նոր Պատվերի կատարումը, մինչև Ձեր կողմից անկա պարտքի մարումը:

6. Վճարում

- Ապրանքների և/կամ Ծառայությունների համար վճարումն իրականացվում է ինչպես կանխիկ՝ առաքողին Պատվերն առաքելու պահին կանխիկ վճարման միջոցով, այնպես էլ անկանխիկ՝ վճարային քարտերի օգնությամբ: Խնդրում ենք նկատի ունենալ, որ կանխիկ վճարման հնարավորությունը գործում է բացառապես Երևան քաղաքի վարչական սահմաններում առաքվող Պատվերների դեպքում:

- Վճարման ընդունվող վճարային քարտերի և գործընկեր հանդիսացող բանկերի և վճարային համակարգերի ցանկը սահմանված է Ինտերնետ Խանութում:

7. Առաքում

- Պատվերը էլեկտրոնային նամակի միջոցով հաստատելուց հետո Օրանժն իրականանցում է Պատվերի առաքումը փոստային կամ սուրհանդակային ծառայության միջոցով: Խնդրում ենք նկատի ունենալ, որ սուրհանդակային առաքումը գործում է բացառապես Երևան քաղաքի վարչական սահմաններում:

- Ապրանքների և/կամ Ծառայությունների առաքման ժամկետը Երևան քաղաքի վարչական սահմաններում կազմում է 24 ժամ, իսկ ՀՀ մարզերի դեպքում՝ 72 ժամ, որը հաշվարկվում է Պատվերի հաստատումը էլեկտրոնային փոստի միջոցով Հաճախորդի կողմից ստանալու պահից: Օրանժը գործադրում է իր բոլոր ողջամիտ ջանքերը առաքումը սահմանված ժամկետին իրականացնելու համար, սակայն պատասխանատվություն չի կրում իրենից անկախ պատճառներով առաքման ուշացման համար:

- Առաքման ժամերն են ամեն օր 10:00 – 19:00: Առաքումն իրականացվում է նաև հանգստյան և տոնական օրերին: Առաքումը իրականացվում է միայն Հայաստանի Հանրապետության տարածքում Պատվերում նշված հասցեով:

- Նախքան առաքումն իրականացնելը Ձեզ հետ կկապվեն Ձեր կողմից Պատվերում նշված հեռախոսով տեղեկացնելու համար Ձեր կողմից պատվիրված Ապրանքների և/կամ Ծառայությունների առաքման փաստի մասին և համաձայնեցնելու համար

առաքման ժամը և վայրը: Դուք պարտավոր եք սահմանված ժամին և վայրում հասանելի լինել պատվիրված Ապրանքը և/կամ Ծառայությունը ընդունելու համար: Պատվիրված Ապրանքը և/կամ Ծառայությունը հանձնվում է միայն Ձեզ, բացառությամբ նախապես վճարված Ապրանքների (Ապրանքներ այս դեպքում չեն համարվում Մոդեմները), որոնք կարող են առաքվել Ձեր կողմից որպես ստացող նշված անձին, նրա կողմից ստացման հետ կապված անհրաժեշտ փաստաթղթերը հաստատելու պայմանով:

- Պատվիրված Ապրանքը և/կամ Ծառայությունը ստանալու պահին Դուք ստանում եք փաթեթ, որը ներառում է՝ ՀԴՄ-ի կտրոն (եթե վճարումը կատարվում է կանխիկ), Ծառայությունների դեպքում Բաժանորդագրման Փաթեթը և Ծառայությունների մատուցման վերաբերյալ Բաժանորդային Պայմանագիրը, ներառյալ դրա հավելվածներն ու փոփոխությունները, Լայնաշերտ Ծառայությունների դեպքում համապատասխան Մոդեմը, Ապրանքի պատվերի դեպքում Ապրանքը և Ապրանքի շահագործման ձեռնարկը և երաշխիքային կտրոն (եթե առկա է):

- Խնդրում են նկատի ունենալ, որ Ծառայություն պատվիրելու դեպքում Դուք պարտավոր եք ստորագրել առաքման ժամանակ Ձեզ ներկայացված Բաժանորդային Պայմանագրի երկու օրինակը և դրանցից մեկը՝ Ձեր անձը հաստատող փաստաթղթի պատճենի հետ միասին ետ ուղարկել Օրանժին՝ առաքողի միջոցով:

- Խնդրում ենք նկատի ունենալ, որ Ձեր կողմից պատվիրված Ծառայության ակտիվացման ժամկետը կազմում է 24 ժամ՝ Երևան քաղաքի վարչական սահմաններում առաքման դեպքում և 72 ժամ՝ ՀՀ մարզեր առաքման դեպքում՝ հաշվարկված Ձեր կողմից Բաժանորդային Պայմանագրի մեկ ստորագրված օրինակը և Ձեր անձը հաստատող փաստաթղթի պատճեն Օրանժին փոխանցելու նպատակով առաքողին հանձնելու և պատվիրված Ծառայության համար վճարումը կատարելու պահից:

- Առաքողը իրավունք ունի Ձեր կողմից պատվիրված Ապրանքը և/կամ Ծառայությունը Ձեզ առաքելու ժամանակ, մինչև դրա հանձնում, Ձեզանից պահանջել ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ, հնարավոր շփոթություններից կամ կեղծիքներից խուսափելու համար: Եթե Ապրանքը և/կամ Ծառայությունը հանձնելիս ներկայացված անձը հաստատող փաստաթուղթը և/կամ դրա տվյալները չեն համապատասխանում Պատվերը ձևակերպելիս նշված տվյալներին, առաքողն իրավունք ունի հրաժարվել առաքումը հանձնելուց, ինչը չի համարվում Օրանժի կողմից Բաժանորդային Պայմանագրի պայմանների խախտում:

- Խնդրում ենք պատվիրված Ապրանքը և/կամ Ծառայությունը ստանալու պահին առաքողի ներկայությամբ ստուգել մատակարարված Ապրանքի և/կամ Ծառայության համապատասխանությունը Ձեր կողմից ներկայացված Պատվերին, ինչպես նաև դրա հետ ներկայացվող փաթեթը և դժգոհություններ և/կամ նկատողություններ չունենալու դեպքում ստորագրել առաքողի կողմից ներկայացված Պատվերի ընդունման հայտն այն մասին, որ Դուք չունեք դժգոհություններ և որ պատվիրված Ապրանքը և/կամ Ծառայությունը Ձեր կողմից ստացվել է ամբողջությամբ և պատշաճ վիճակում:

- Խնդրում ենք նկատի ունենալ, որ Օրանժը չի ընդունի Պատվերի և/կամ պատվիրված Ապրանքի և/կամ Ծառայության հետ կապված որևէ բողոք և/կամ առարկություն, որոնք կներկայացվեն Ձեր կողմից վերոնշյալ ընդունման հայտը ստորագրելուց հետո:

- Ապրանքների և/կամ Ծառայությունների կորստի կամ վնասվածքի դիսկն անցնում է Հաճախորդին՝ Ապրանքը և/կամ Ծառայությունը նրան փաստացի հանձնելու և Հաճախորդի կողմից վերոնշյալ ընդունման հայտը ստորագրելու պահից:

- Օրանժը պատասխանատվություն չի կրում Ձեր կողմից սխալ կամ ոչ լիարժեք հասցե նշելու և/կամ սահմանված ժամին և վայրում առաքման վայրում չլինելու հետևանքով Ապրանքը և/կամ Ծառայությունը չառաքելու կամ ուշ առաքելու համար:

- Այն դեպքում, երբ որպես վճարման միջոց ընտրվել է կանխիկը, Դուք վճարումը կատարում եք անմիջապես առաքողին՝ պատվիրված Ապրանքը և/կամ Ծառայությունը Ձեզ հանձնելիս, որի վերաբերյալ համատասխան նշում է կատարվում առաքված Ապրանքի և/կամ Ծառայության ընդունման հայտում:

- Առաքումը համարվում է կատարված առաքված Ապրանքի և/կամ Ծառայության ընդունման հայտը ստորագրելու պահից:

8. Վերադարձ

- Դուք կարող եք վերադարձնել Ինտերնետ Խանութից ձեռք բերված Ապրանքը և/կամ Ծառայությունը, Օրանժի կողմից տվյալ Ապրանքի և/կամ Ծառայության համար սահմանված կարգով և պայմաններով, այցելելով Օրանժի գլխավոր խանութ, որը գտնվում է ք.Երևան, Հյուսիսային Պողոտա 2 հասցեում: Խնդրում ենք նկատի ունենալ, որ Ապրանքի և/կամ Ծառայության վերադարձն իրականացվում է բացառապես գլխավոր խանութում և պայմանով, որ Օրանժի կողմից տվյալ Ապրանքի և/կամ Ծառայության վերադարձման համար սահմանված կարգն ու պայմանները պահպանվել են:

9. Սեփականության իրավունք

- Ապրանքների, բացառությամբ Մոդեմների, նկատմամբ սեփականության իրավունքը Ձեզ է անցնում Ձեր կողմից դրանց համար ամբողջությամբ վճարելու պահից: Մոդեմների նկատմամբ սեփականության իրավունքը կարգավորվում է համապատասխան Բաժանորդային Պայմանագրով: Մոդեմի համար ամբողջությամբ վճարելու դեպքում սեփականության իրավունքը Ձեզ է անցնում դրա համար ամբողջությամբ վճարելու պահից:

10. Գաղտնիություն

- Դուք սույնով համաձայնում և հաստատում եք, որ Պատվերը ձևակերպելիս և այլ կերպ Ինտերնետ Խանութում Ձեր կողմից տրամադրված Ձեզ վերաբերող անձնական

տեղեկությունները, ներառյալ առանց սահմանափակման Ձեր անունը և ազգանունը, հասցեն, տարիքը և այլն կարող են օգտագործվել Օրանժի կողմից օրենքով չարգելված եղանակներով և նպատակներով:

- Ինտերնետ Խանութում Պատվեր ներկայացնելիս Դուք երաշխավորում և հաստատում եք, որ Ձեր 18 տարին լրացած է և Ձեր կողմից մուտքագրված անձնական տեղեկությունները ճիշտ են և լիարժեք: Դուք կրում եք Պատվերը ձևակերպելիս ներկայացված տեղեկատվության ճշմարիտ և ստույգ լինելու ողջ պատասխանատվությունը:

- Խնդրում ենք նկատի ունենալ, որ երրորդ անձանց կողմից (ներառյալ անչափաս երեխաների կողմից) Ձեր անունից Ապրանքներ և/կամ Ծառայություններ պատվիրելը և/կամ դրանց համար անկանխիկ վճարումներ իրականացնելը համարվում է կատարված Ձեր կողմից: Բացառապես Դուք եք պատասխանատվություն կրում երրորդ անձանց կողմից Ձեզ վերաբերող անձնական տեղեկատվության տրամադրման և վճարային քարտերի օգտագործման համար:

- Օրանժը երաշխավորում է գործադրել իր լավագույն ջանքերը առավելագույնս ապահովելու համար իր Ինտերնետ Խանութի անվտանգությունն ու ապահովությունը և պատասխանատվություն է կրում Հաճախորդի կողմից Ինտերնետ Խանութում Պատվեր ձևակերպելու ժամանակ մուտքագրված տեղեկատվության չտարածման և գաղտնիության համար, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերում և համապատասխան իրավասու մարմիններին Օրանժի կողմից այդպիսի տվյալների հրապարակման անհրաժեշտության: Այնուամենայնիվ, Դուք ընդունում և համաձայնում եք, որ Օրանժն իրավասու է օգտագործել Ձեր կողմից ներկայացված տեղեկատվությունը Բաժանորդային Պայմանագրում սահմանված իր պարտականությունները կատարելու, այդ թվում առաքողի կամ փոստային ծառայության միջոցով առաքման պատշաճ իրականացումը ապահովելու համար:

- Ինտերնետ Խանութում տեղակայված այլ կայքերի հղումներից օգտվելիս խնդրում ենք նկատի ունենալ, որ Օրանժը չի երաշխավորում այդ կայքերի անվտանգությունն ու ապահովությունը: Այդ կայքեր այցելություններն իրականացվում են Ձեր կողմից Ձեր ռիսկով:

- Խնդրում ենք նկատի ունենալ, որ Ինտերնետ Խանութ այցելելիս, մեր կողմից գրանցվում է Ձեր այցի օրը, ամիսը, տարեթիվն ու ժամը:

- Ինտերնետ կայքի և օգտագործողների միջև տեղեկատվության հոսքը պաշտպանված է 128 բիտ SSL բանալիով:

11. Այլ դրույթներ

- Orange-ը հանդիսանում է պատշաճ ձևով գրանցված և OBSL-ի սեփականությունը հանդիսացող ապրանքային նշան:

- Ինտերնետ Խանութի բացառիկ իրավատեր է հանդիսանում Օրանժը: Հաճախորդը կարող է օգտվել Ինտերնետ Խանութից միայն անձնական նպատակներով: Հաճախորդը իրավասու չէ որևէ կերպ օգտագործել և/ կամ վերարտադրել և/կամ փոխանցել և/կամ տարածել կամ որևէ այլ կերպ պահպանել Ինտերնետ Խանութում տեղակայված տեքստը, աուդիովիզուալ պատկերները, գծապատկերներ, կշանները, վեբ-գրաֆիկան, Ապրանքների և Ծառայությունների նկարագրությունները և ցանկացած այլ տեղեկությունները կամ դրանց մասը և/կամ Orange բրենդը և/կամ դրա մասը, առանց Օրանժի գրավոր համաձայնության: Ինտերնետ Խանութի բովանդակության ցանկացած չթույլատրված օգտագործումը կարող է դիտարկվել օրենսդրության խախտում և Դուք կկրեք պատասխանատվություն համաձայն կիրառվող օրենսդրության:

- Օրանժն իրեն իրավունք է վերապահում ժամանակ առ ժամանակ փոփոխել սույն Հատուկ Պայմանների դրույթներն ու պայմանները, որոնք ուժի մեջ են մտնում դրանք Օրանժի Ինտերնետ Խանութում հրապարակելու պահին կամ ինչպես կսահմանվի Օրանժի կողմից: Շարունակելով օգտվել Ինտերնետ Խանութից Դուք տալիս եք Ձեր համաձայնությունը այդ փոփոխություններն ընդունելու վերաբերյալ:

- Ձեր կողմից ինտերնետի, ներառյալ վերջինիս բովանդակության օգտագործումը, իրականացվում է բացառապես Ձեր սեփական ռիսկով և պետք է համապատասխանի տեղական և միջազգային բոլոր կիրառելի օրենքներին, ենթաօրենսդրական ակտերին և նորմերին:

- Օրանժը կձեռնարկի ողջամիտ միջոցներ Ինտերնետ Խանութի անխափան աշխատանքը ապահովելու համար, սակայն, այնուամենայնիվ, Օրանժը պատասխանատվություն չի կրում Ինտերնետ Խանութում առկա թերությունների կամ անսարքությունների հետևանքների համար:

- Օրանժը պատասխանատվություն չի կրում Ձեր կողմից պատվիրված Ապրանքի և/կամ Ծառայության ուշ առաքվելու կամ չառաքվելու համար, եթե այդպիսի ուշացումը կամ առաքման չկատարելը անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանք են:

- Օրանժը կարող է ցանկացած ժամանակ կասեցնել կամ փոփոխել Ինտերնետ Խանութի միջոցով առաջարկվող ծառայությունները իր բացառիկ հայեցողությամբ:

- Եթե Հաճախորդը թույլ է տալիս խախտում Պատվերի ձևակերպման և/կամ պատվիրված Ապրանքի և/կամ Ծառայության ստացման և/կամ ընդունման և/կամ դրա համար վճարման հետ կապված և/կամ սույն Հատուկ Պայմանների և/կամ Բաժանորդային Պայմանագրի պայմանների չկատարում կամ ոչ պատշաճ կատարում և/կամ հրաժարվում է Բաժանորդային Պայմանագրի ստորագրումից և/կամ Պատվերը ձևակերպելիս ոչ ստույգ տեղեկություն է տրամադրում, Օրանժն իրավասու է իր բացառիկ հայեցողությամբ չընդունել Հաճախորդի կողմից հետագայում ներկայացվող Պատվեր(ներ)ը և/կամ հրաժարվել արդեն ներկայացված Պատվերների իրականացումից և/կամ Հաճախորդի հետ կնքված Բաժանորդային Պայմանագրից:

- Օրանժն իրավունք ունի հրաժարվել ընդունելու Հաճախորդի Պատվերը, եթե Հաճախորդը համաձայն չէ Բաժանորդային Պայմանագրի և/կամ սույն Հատուկ Պայմանների հետ և/կամ Հաճախորդը նախկինում թույլ է տվել սույն Հատուկ Պայմանների և/կամ Բաժանորդային Պայմանագրի էական խախտում, որը ներառում է առանց սահմանափակման Պատվերը ձևակերպելիս ոչ ճիշտ տվյալները ներկայացնելը կամ այլ չարաշահումներ թույլ տալը, առաքված Ապրանքները և/կամ Ծառայությունները առանց հիմնավորման ընդունելուց հրաժարվելը 2 և ավելի անգամ և այլն: